

Հավելված 2

ԵՊՀ ԻՄ 2015-16 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների վերլուծություն

Բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության արդյունավետության կարևորագույն բաղադրիչներից մեկը, եթե ոչ ամենակարևորը՝ շրջանավարտների ամփոփիչ քննության և ավարտական աշխատանքների պաշտպանության որակա-քանակական այն գնահատականներն են, որոնք տրվում են Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կողմից: Ի թիվս այլոց, ԵՊՀ ԻՄ-ի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից հանձնաժողովներին տրվել է հաշվետվության հատուկ ձևաթերթ, որում հանձնաժողովին առաջարկվել է գնահատել շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքները, ավարտական աշխատանքների թեմաները, դրանց համապատասխանությունը որակավորմանը և շրջանավարտների կողմից աշխատանքների ներկայացման հմտությունը:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներն իրենց կարծիքներն են ներկայացրել շրջանավարտների.

1. մասնագիտական գիտելիքների և պատկերացումների իմացության և ըմբռնման;
2. ձեռք բերված գիտելիքների և պատկերացումների կիրառման կարողությունների;
3. իրենց մասնագիտության շրջանակներում դատողություններ անելու կարողությունների;
4. հաղորդակցման կարողությունների առկայության;

5. ինքնակրթության հմտությունների դրսևորման մակարդակի վերաբերյալ:

Ավարտական աշխատանքների վերաբերյալ հանձնաժողովը վերլուծել է.

ա/ թեմատիկայի համապատասխանությունը որակավորմանը;

բ/ ավարտական աշխատանքների տրամաբանական կառուցվածքը;

գ/ յուրօրինակ լուծումների, նորարարական տարրերի, վերհանված խնդիրների համակողմանի ուսումնասիրման և վերլուծության առկայությունը;

դ/ փորձնականորեն ստացված կամ ուսումնասիրված տվյալների հանրագումարային ներկայացման, սեփական տեսակետների վստահ պաշտպանության կարողությունների մակարդակը;

ե/ մասնագիտական գրականությունից օգտվելու և համադրելու կարողությունները;

զ/ աշխատանքի ներկայացման մակարդակը և մասնագիտորեն գրագետ բանավոր խոսքը:

Ներկայացնենք հանձնաժողովների ընդհանրական գնահատականներն ու առաջարկները մասնաճյուղի կտրվածքով:

Ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման բաժնի տարբեր մասնագիտությունների հանձնաժողովները ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքներից ստացած տպավորությունները, որակական գնահատականները ձևակերպել են յուրովի, սակայն դրանք հատվում են մի կետում, այն է՝ ԵՊՀ ԻՄ-ի 2015-16 ուստարվա շրջանավարտներն ընդհանուր առմամբ ունեն մասնագիտական գիտելիքների իմացության և ըմբռնման պատշաճ մակարդակ, դրանք կիրառելու անհրաժեշտ կարողություն, կրթական և մասնագիտական միջավայրում գրագետ դատողություններ անելու հմտություններ: Նրանք ազատորեն կարողանում են հայտնել ու քննարկել իրենց կարծիքը, հեշտությամբ հաղորդակցվում են հանձնաժողովի անդամների հետ,

ներկայացնում լսարանից դուրս ստացած տեղեկությունները, ինչը յուրովի ինքնակրթության արտահայտություններից է, մի բան, որը կարևորվում է կրթական ներկա զարգացումներում:

Սույն համատեքստում, թերևս կարևոր է անդրադառնալ նաև այն եզակի ու իրադրային նկատառումներին, որոնք շրջանավարտների որակների վերաբերյալ արտահայտվել են առանձին մասնագիտությունների հանձնաժողովների կողմից:

Այսպես, Սերվիս մասնագիտության առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կարծիքով շրջանավարտների ինքնակրթության դրսևորումների մակարդակը քննության շրջանակներում դժվար է գնահատել: Տվյալ որակը ընդհանրապես չի գնահատել Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության հանձնաժողովը: Իր հերթին, Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության նմանօրինակ հանձնաժողովը, թեև նշում է, որ շրջանավարտների ձեռք բերված գիտելիքների և պատկերացումների կիրառման կարողությունների մակարդակը բավարար է, այդուհանդերձ, հեռակա ուսուցման ուսանողներից ստացած տպավորությունների հիման վրա նշում է, որ քննասենյակը բավարար հնարավորություններ չի ընձեռում նման որակը միանշանակ գնահատելու համար: Նույնը հավաստում է նաև Բնօգտագործում և բնապահպանություն մասնագիտության հանձնաժողովը, միաժամանակ նշելով, որ ուսանողների որոշակի կաշկանդվածությունը օբյեկտիվ է և բնական նաև հանձնաժողովի հետ հաղորդակցման ընթացքում:

Առանձին այս դիտողություններն ու նկատառումները, կարծում ենք պետք է դառնան համապատասխան հանձնաժողովների ու ոլորտի կազմակերպման պատասխանատուների ուշադրության առարկա: Առկա է նուրբ խնդիր. հնարավորինս պարզաբանել, թե տվյալ կաշկանդվածությունը կամ դժվարությունը որչափով են առնչվում շրջանավարտների որակների կամ

հանձնաժողովի ստեղծած մթնոլորտի հետ, որչափով է այն նաև կազմակերպիչների որոշակի մոտեցումների արդյունք. լսարանային պայմաններ, քննության ժամկետներ և այլն:

Որպես գնահատական էլ ավելի բարձր էին ավարտական աշխատանքների պաշտպանությունից հանձնաժողովների ստացած տպավորությունները: Ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման հանձնաժողովները, տարբեր ու յուրովի ձևակերպումներով հանդերձ, գրեթե միահամուռ են այն տպավորություններում, որ ԵՊՀ ԻՄ-ի 2015-16 ուստարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների թեմատիկան համապատասխանում է մասնագիտության առաջադրվող պահանջներին, բովանդակությունը, տեսական մասին զուգընթաց հիմնավորված է հետազոտական արժանահավատ տվյալներով, հիմնախնդիրները վերլուծված են համակարգված սկզբունքով, մի բան, որն անշուշտ նաև գիտական ղեկավարների հետևողական աշխատանքի արդյունք է: Աշխատանքների մեծ մասում նկատելի են ուսանողների ինքնուրույնության տարրերը, գիտության արդի հիմնախնդիրներին, ինովացիոն տեխնոլոգիաներին անդրադարձը, նորովի մոտեցումները: Վիճելի դրույթների, տեսակետների կողքին, ինչը հանձնաժողովները, թերևս, իրավամբ համարում են բնական, մասնաճյուղի շրջանավարտները փորձում և հիմնականում կարողանում էին փաստարկել ու հիմնավորել իրենց տեսակետները, վերլուծաբար օգտվել տեսական աղբյուրներից, սկզբնաղբյուրներից, հստակ և համոզիչ, տրամաբանական խոսքով կատարել հարցադրումներն ու պատասխանել դրանց:

Երբ ընդհանրացնում ենք ամփոփիչ քննության և ավարտական աշխատանքների պաշտպանության քանակական գնահատականները, տեսնում ենք, որ դրանք նկատելի խզում չունեն խմբային սուբյեկտիվ տպավորությունների հետ, հակառակը՝ գրեթե լիովին համահունչ են դրանց: Այսպես, առկա և հեռակա ուսուցման բաժինների ամփոփիչ քննություն հանձնած 368 ուսանողից՝ 225-ը

(61,0%) ստացել են գերազանց և լավ գնահատականներ: Ավարտական աշխատանքները պաշտպանած 365 շրջանավարտից գերազանց և լավ գնահատական են ստացել՝ 258-ը (70,0%): Եթե առանձին մասնագիտություններից տարանջատենք համեմատաբար բևեռացված գնահատականները, տեսնում ենք, որ, օրինակ, ամփոփիչ քննությունից գերազանց գնահատականը բացակայում է՝ Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա (հեռակա ուսուցում), Տնտեսագիտության տեսություն (հեռակա ուսուցում), Հայոց լեզու և գրականություն (հեռակա ուսուցում) մասնագիտության շրջանավարտների մոտ: Այս նույն խմբերում գերազանց չի գնահատվել նաև որևէ ավարտական աշխատանք: Սրա կողքին միայն գերազանց և լավ են գնահատվել Կիրառական արվեստի շրջանավարտների ավարտական աշխատանքները, ինչպես նաև Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության (առկա ուսուցման) ամփոփիչ քննություններն ու ավարտական աշխատանքները:

Համառոտ ընդհանրացնենք նաև հանձնաժողովների առաջարկները: Այն առաջարկները, որոնք վերաբերում են որոշակի մասնագիտությանը, բերված են համապատասխան հանձնաժողովի հաշվետվության մեջ: Այստեղ ներկայացվում են միայն այն առաջարկությունները, որոնք ունեն որոշակի ընդհանրություն տարբեր մասնագիտությունների համար:

Ուսումնառության ընդհանրական արդյունքների հետագա բարելավման ուղղությամբ հանձնաժողովների առաջարկների մի մասը վերաբերում է հարցաշարերին: Այստեղ տարբեր մասնագիտական հանձնաժողովներ ցանկալի են համարել, որպեսզի հարցաշարերում ավելացվեն կոնկրետ հարցերը, դրանք չկրկնեն ավարտական աշխատանքների թեմաները, նրանցում հաշվի առնվի ոլորտը կարգավորող օրենսդրությունը, ապահովվի տարբեր դասընթացներին վերաբերող հարցերի համամասնությունը: Հայաստանի, Տավուշի մարզի համար արդիական է ոչ միայն հարցաշարերում ռազմական պատմությանը նվիրված

հարցերի առկայությունը, այլն՝ ուսումնական ծրագրերում տվյալ թեմատիկայի զարգացումը:

Առաջարկների մյուս մասը կապված է տեսական գիտելիքների գործնական կիրառման ու, մասնավորաբար, դրանում լաբորատոր անհրաժեշտ բազայի ապահովման, պրակտիկաների արդյունավետ անցկացման հետ: Թերևս իմաստն այն է, որ պետք է ավելի հստակ կողմնորոշվել շրջանավարտների պրակտիկ կարողությունների գնահատման հարցում: Այն, ինչը կապված է մասնաճյուղում առկա օբյեկտիվ հնարավորությունների հետ, տարանջատել իրենց՝ ուսանողների սուբյեկտիվ ակտիվությունից, ձգտումներից ու պատրաստվածությունից: Օբյեկտիվ հնարավորությունների գնահատման հարցում հաշվի առնել ուսումնական գործընթացի կազմակերպման, մասնագիտական ծրագրերի իրագործման հարցում տարամակարդակ (վարչական մաս, ֆակուլտետ, ամբիոն, պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ) պատասխանատուների «պատասխանատվության չափը»: Այսինքն, եթե շրջանավարտի գործնական հմտությունների պակասի պատճառը լաբորատոր բազայի բացակայությունն է կամ անհրաժեշտ սարքավորումների պակասը, հարկավոր է որոշել, թե պատասխանատու որ օղակի հնարավոր թերացումն է դրա պատճառը, կամ, որքանով այն դուրս է գալիս մասնաճյուղի իրավասության շրջանակներից:

Ավարտական աշխատանքների ժամանակակից թեմաների ընտրության, շրջանավարտների կողմից դրանց իրականացման հետագա բարելավման ուղղությամբ հանձնաժողովների առաջարկություններում յուրովի շեշտադրվում են հնարավորինս տարածաշրջանային խնդիրներին նվիրված հետազոտությունները, դրանց արդիականությունը, ուսումնասիրություններում գործնական հարցադրումներ կատարելու և դրանց լուծելու կարողությունների բացահայտումը: Այս և նմանօրինակ հարցերում կարևորվում են ժամանակակից գրականության օգտագործումը, ավարտական աշխատանքի լեզուն (օրինակ՝

աշխատանքը գրվի ֆրանսերեն տվյալ մասնագիտության համար), ռազմական թեմատիկան, կովկասագիտությունը, լեզվական սխալների ուղղումը, Հայաստանի Հանրապետության տնտեսության գերակա ուղղությունները, խոշոր բնակավայրերի բնապահպանական հարցերը և այլն:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ ըստ ԵՊՀ ԻՄ–ի 2015-2016 ուստարվա շրջանավարտներն ըստ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների գնահատականների հիմնականում պատշաճ մակարդակով տիրապետում են այն մասնագիտական որակներին, որոնք դրված են բակալավրական կրթության առջև:

Սույն ոլորտում մասնաճյուղում իրականացվող գործունեության արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված առաջարկներում հանձնաժողովները կարևորել են հարցաշարերի և ավարտական աշխատանքների թեմատիկայի արդիականացումը, հնարավորինս տարածաշրջանային հիմնախնդիրներին անդրադարձը, լաբորատոր բազայի կատարելագործումն ու պրակտիկաների ավելի արդյունավետ ու նպատակաուղղված անցկացումը:

Այս ամենը, ինչպես նաև զուտ առանձին մասնագիտություններին վերաբերող դիտողություններն ու առաջարկությունները հիմք են ուսումնական գործընթացի կազմակերպման ու կառավարման տարբեր մակարդակի շահախնդիր կողմերի հետ քննարկելու և ընթացիկ ուսումնական տարվա աշխատանքները բարելավելուն ուղղված կոնկրետ միջոցառումներ մշակելու համար: